Հավելված
Հաստատված է
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2012 թվականի ապրիլի 12 -ի
N 118Ա որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը էներգետիկայի, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակ-ցության), փոստային կապի (ունիվերսալ ծառայությունների մասով), երկաթուղային տրանսպորտի (ենթակառուցվածքի օգտագործման վճարի սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների մասով) բնագավառներում և ջրային ոլորտում կարգավորող մարմին է, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Փոստային կապի մասին», «Երկաթուղային տրանսպորտի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով) 2011 թվականին գործել է հետևյալ կազմով.

Ռոբերտ Նազարյան՝ հանձնաժողովի նախագահ

Շիրազ Կիրակոսյան՝ հանձնաժողովի նախագահի տեղակալ

Սամվել Արաբաջյան՝ հանձնաժողովի անդամ

Մուշեղ Կոշեցյան՝ հանձնաժողովի անդամ

Արթուր Վարդանյան՝ հանձնաժողովի անդամ

Հանձնաժողովն իր աշխատանքը կազմակերպել է աշխատակազմի միջոցով, որն ունի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները.

- սակագնային քաղաքականության վարչություն,
- ֆինանսական վերլուծության վարչություն,
- իրավաբանական և լիցենզավորման վարչություն,
- լիցենզավորված գործունեության մոնիթորինգի և ներդրումային

ծրագրերի վարչություն՝

ա) տեխնիկական մոնիթորինգի և փորձաքննության բաժին,

բ) ներդրումային ծրագրերի բաժին,

- հեռահաղորդակցության վարչություն,
- սպառողների հետ կապերի բաժին,
- տնտեսական բաժին,
- անձնակազմի կառավարման բաժին,
- հաշվապահական հաշվառման բաժին,
- ընդհանուր բաժին:

Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համակարգում է հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:

1. Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործում

Հանձնաժողովն իր գործառույթների առաջնահերթություններից է համարում կարգավորման օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործումը՝ ելնելով սպառողների և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսման և կարգավորման դաշտի թափանցիկության ապահովման առաջնահերթություններից: Այս համատեքստում 2011 թվականին շարունակվել են **էներգետիկայի բնագավառի** կարգավորման իրավական դաշտի կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Սպառողների սպասարկման որակի բարելավման և մատակարար-սպառող հարաբերություններում առաջացող խնդիրների կարգավորման նպատակով 2011 թվականին մի շարք փոփոխություններ են կատարվել էլեկտրական էներգիայի ու բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններում:

Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման գործընթացի բարելավման, ինչպես նաև փոքր և միջին բիզնեսի զարգացման համար առավել նպաստավոր միջավայր ստեղծելու նպատակով

հանձնաժողովը մի շարք փոփոխություններ է կատարել իր նախկին որոշումներում, որոնց արդյունքում՝

- նվազագույնի է հասցվել էլեկտրական ցանցին միանալու ցանկություն ունեցող անձի կողմից միացման գործընթացում իրականացվող քայլերի քանակը: Դիմում ներկայացնելու պահից մինչև էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագիր կնքելը դիմող անձի և մատակարարի միջև տարբեր փաստաթղթերի ներկայացման և համաձայնեցման նպատակով իրականացվող քայլերը նախկին ութի փոխարեն ներկայումս երկուսն են.
- նվազեցվել են դիմող անձանց սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացնելու նպատակով միացման և էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագրեր կնքելու առավելագույն ժամկետները:

  Մասնավորապես, 0.22կՎ լարման սպառողների սպառման համակարգերի միացման ժամկետները պարզ սխեմաների դեպքում կրճատվել են շուրջ 3, 0.4կՎ լարման մինչև 30 կՎա հզորության սպառողներինը պարզ սխեմաների դեպքում՝ 9, իսկ նախագծային լուծումների անհրաժեշտության դեպքում 3 անգամ: Այս ժամկետները կրճատվել են նաև մնացած բոլոր սպառողների համար՝ միջինը 2 անգամ.
- փոքր և միջին բիզնեսի հատվածի համար նվազեցվել են նաև միացման վճարները, մասնավորապես, 0.22կՎ առևտրային սպառողների սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացման վճարները հավասարեցվել են նույն լարման առանձնատների միացման վճարներին, իսկ 0.4կՎ լարման ցանցին միացման վճարները, որոնք սահմանվել էին հզորության տարբեր միջակայքերի համար, այժմ սահմանվել են յուրաքանչյուր միավոր հզորության համար: Արդյունքում՝ 0.22կՎ լարման առևտրային սպառողների միացման վճարները նվազել են ավելի քան 4 անգամ, իսկ 0.4կՎ լարման առևտրային սպառողներինը՝ միջինը շուրջ 2 անգամ:

Հանձնաժողովը վերանայել է այլ սպառողների (ենթասպառողների) կամ մատակարարի այլ ցանցերի սնման համար սպառողի մատուցած ծառայությունների վճարների հաշվարկման մեթոդիկան, որի արդյունքում 2012 թվականի ապրիլի 1-ից նշված վճարները կաճեն շուրջ 30 տոկոսով: Այս փոփոխությունները հնարավորություն կընձեռեն սպառողներին բարձրացնել նշված նպատակով մատուցվող ծառայությունների որակը և կրճատել սեփական էլեկտրատեղակայանքների խափանման պառճառով այլ

սպառողների (ենթասպառողների) կամ մատակարարի այլ ցանցերի էլեկտրամատակարարման ընդհատումների քանակն ու տևողությունը:

Բացի վերը նշվածից, նվազեցվել է սպառողի պահանջով առևտրային հաշվառքի սարքերի փոխարինման համար նախատեսված կանխավճարի չափը: Միաֆազ ինդուկցիոն հաշվիչները միաֆազ բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչներով փոխարինելու համար սահմանված 20000 դրամ կանխավճարի չափը նվազեցվել է մինչև 10000 դրամ, իսկ եռաֆազ ինդուկցիոն հաշվիչը բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչով փոխարինելու համար սահմանված 120000 դրամ կանխավճարի չափը՝ մինչև 50000 դրամ:

Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները վերանայելիս առաջին հերթին լուծում է տրվել մատակարար-սպառող առևտրային հարաբերություններում ծագող վիճելի հարցերին: Մասնավորապես, իրավաբանական անձանց առևտրային հաշվառքի սարքով հաշվառված բնական գազի քանակը «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական չափագիտական հսկողության և վերահսկողության ենթակա ոլորտներում կիրառվող չափումների կատարման մեթոդիկաներով ճշգրտվում է՝ կախված բնական գազի ճնշումից և ջերմաստիճանից, ինչը հաճախ հաշվարկների հիմքում դրվող հարաչափերի պատճառով մատակարարի և սպառողների միջև տարակարծությունների տեղիք է տալիս: Ուստի հանձնաժողովը, նախ, սահմանել է, որ սպառողի ծախսած բնական գազի քանակը չի ճշգրտվում, եթե վերջինս օգտագործում է ցածր ճնշման բնական գազ, և բնական գազի ծախսը հաշվառվում է մինչև G6 (ներառյալ) տիպի բնական գազի մեկ առևտրային հաշվառքի սարքով:

Մատակարար-սպառող հարաբերություններում առևտրային հաշվառքի սարքերի խափանման դեպքերում ծախսված էլեկտրական էներգիայի կամ բնական գազի քանակի վերահաշվարկի ընթացքում ծագող տարաձայնությունների կարգավորման նպատակով ամբողջությամբ վերանայվել են բնական գազի և էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններում այդ հարաբերությունները կարգավորող դրույթները: Մասնավորապես, արգելվել է նման դեպքերում դադարեցնել սպառողների էներգամատակարարումը մինչև վեճերի վերջնական լուծումը, խստացվել է մատակարարների պատասխանատվությունը, սահմանվել են վերահաշվարկների

հստակ մեխանիզմներ և երկկողմանի պատժամիջոցներ՝ առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքին միջամտելու համար:

Հանձնաժողովը իրավական փորձաքննության է ենթարկել նաև էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց միջև կնքված 200 պայմանագրեր:

2011 թվականի ընթացքում «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված գործառույթների իրականացման նպատակով, հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականության գերակայությունները՝ հանձնաժողովը աշխատանքներ է տարել բնագավառում արդար և բաց մրցակցության երաշխավորման և էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հասանելիության ապահովման ուղղությամբ:

Այսպես, բջջային օպերատորների գործունեության թափանցիկության աստիճանը բարձրացնելու, ինչպես նաև մատուցվող ծառայությունների որակական չափանիշները սպառողներին ներկայացնելու նպատակով հանձնաժողովը 2011 թվականին սահմանել է, որ «ԱրմենՏել», «Ղ-Տելեկոմ», «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ները հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շարժական բջջային կապի ծառայությունների հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն պետք է հրապարակեն իրենց ինտերնետային կայքերում:

Ելնելով հանրային շահից, 2011 թվականին հանձնաժողովը հաստատել է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շարժական բջջային կապի ծառայություններ մատուցողների կողմից կանխավճարային և հետվճարային հեռախոսաքարտերի տրամադրման պայմանագրեր կնքելու, այդ պայմանագրերի փաստաթղթային և էլեկտրոնային բազա ստեղծելու և դրանք վարելու պայմանները:

Հստակորեն սահմանված են վերոհիշյալ տեղեկատվությունը տվյալների էլեկտրոնային բազա մուտքագրման, հեռախոսաքարտերի ակտիվացման և պայմանագրի լուծման ժամկետները:

Մինչ 2011 թվականը «ԱրմենՏել», «Ղ-Տելեկոմ» և «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ները հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շարժական բջջային կապի ծառայություններից օգտվող բաժանորդների քանակի վերաբերյալ տեղեկությունները և հաշվետվությունները զանգվածային լրատվամիջոցներով, այլ պաշտոնական հրապարակումներում, ինչպես նաև հանձնաժողով ներկայացնում էին տարբեր մեթոդների վրա հիմնված հաշվարկների միջոցով: Հիշյալ տեղեկատվության

ներկայացման միատեսակությունն ապահովելու նպատակով հանձնաժողովը 2011 թվականին սահմանել է, որ ներկայացվեն միայն ակտիվ բաժանորդային համարների վերաբերյալ տեղեկություններն ու հաշվետվությունները: Ընդ որում, հստակեցվել է «ակտիվ բաժանորդային համար» հասկացությունը, այն է՝ ակտիվ բաժանորդային համար է հանրային շարժական բջջային կապի յուրաքանչյուր բաժանորդային համար, որի համար վերջին երեք ամսվա ընթացքում կատարվել է վճարում (բաժանորդավճար կամ հաշվի լիցքավորում), կամ որն օգտագործվել է ելքային կամ մուտքային (ձայնային կամ ոչ ձայնային) ծառայության ստացման համար՝ բացառությամբ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շարժական բջջային կապի ծառայություններ մատուցողների կողմից ուղարկվող զանգվածային բնույթ կրող գովազդային կամ տեղեկատվական հաղորդագրությունների (Bulk SMS):

Հաշվի առնելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները, էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում գործող ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների կասեցման և դադարեցման գործընթացի հստակ կանոնակարգման նպատակով 2011 թվականին հանձնաժողովի համապատասխան որոշմամբ հաստատվել է ռադիոհաճախականությունների օգտագործման թուլտվությունների կասեցման և դադարեցման կարգը:

Հանձնաժողովը գործուն մասնակցություն է ունեցել «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի մշակման, քննարկման աշխատանքներին՝ ներկայացնելով իր առարկությունները և առաջարկությունները:

2. Սակագնային քաղաքականություն

Հանձնաժողովի կողմից իրականացվող սակագնային քաղաքականությունը հիմնվում է համաշխարհային պրակտիկայում ընդունված անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքի վրա և նպատակաուղղված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն տնտեսական գործունեության ապահովմանը, ինչպես նաև սպառողների և

կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով իրականացնելու արդիականացման և հեռանկարային զարգացման ծրագրեր:

Հիմք ընդունելով 2011 թվականի էլեկտրական էներգիայի արտադրության ու սպառման կանխատեսումները, 2011 թվականի պետական բյուջեում ամրագրված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի մեծությունը և մի շարք այլ գործոններ, հանձնաժողովը 2011 թվականի ապրիլի 1-ից վերանայել է արտադրող կայանների կողմից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության), «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագները, ինչպես նաև «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» և «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ների կողմից էլեկտրաէներգետիկական շուկային ծառայությունների մատուցման հաստատագրված ամսական վճարները:

Էլեկտրաէներգետիկական համակարգի ֆինանսական կայունությունն ապահովելու և, միաժամանակ, 2011 թվականի ապրիլի 1-ից վերջնական սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագնի աճ թույլ չտալու նպատակով, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության առաջարկության համաձայն, էլեկտրաէներգետիկական համակարգում առաջացող լրացուցիչ ֆինանսական ճեղքվածքը փակվել է «Որոտանի ՀԷԿՀ» ՓԲԸ-ից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) սակագնի հաշվարկում ներառված շահույթի և մաշվածության ծախսային հոդվածների նվազեցման հաշվին:

Հաշվետու տարվա ընթացքում ներկայացված հայտերի հիման վրա սահմանվել են 15 նորակառույց և վերանայվել 3 գործող փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

Ելնելով սղաճի և արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից, յուրաքանչյուր տարի՝ համաձայն ընդունված մեթոդիկայի, վերանայվում են վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները: 2011 թվականի նոյեմբերին վերանայվել են «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի «Լոռի-1» հողմային էլեկտրակայանից, «Լուսակերտ Բիոգազ Փլանթ» ՓԲԸ-ի կենսաբանական զանգվածից էլեկտրական

էներգիա արտադրող կայանից և 84 փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

Լրամշակվել է էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգը:

Նպատակ ունենալով խրախուսել հիդրոէներգետիկայի զարգացումը Հայաստանի Հանրապետությունում և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 8-ի «Փոքր հիդրոէլեկտրակայանների համար առավելագույն հզորություն սահմանելու վերաբերյալ առաջարկության մասին» N1300-Ա որոշումը, հանձնաժողովը փոքր հիդրոէլեկտրակայանների համար առավելագույն հզորություն է սահմանել 30ՄՎտ տեղակայված հզորությունը և համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկայում:

2011 թվականի նոյեմբերին «ՀԱՅՌՈՒՍԿՈԳԵՆԵՐԱՑԻԱ» ՓԲԸ-ի ներկայացրած հայտերի հիման վրա սահմանվել են ընկերության էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության «Ինքնավար ջերմային էլեկտրակայան-1 (ԻՋԷԿ-1)» կայանից առաքվող էլեկտրական էներգիայի և Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Հովհաննիսյան թաղամասի սպառողներին վաճառվող ջերմային էներգիայի սակագները:

2011 թվականին «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկի և «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ 2011 թվականի նորոգման ժամկետների փոփոխման հետ կապված՝ ճշգրտվել են 2011 թվականի պայմանագրային և տնօրինելի էլեկտրական հզորությունների չափաքանակները:

«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, էլեկտրաէներգետիկական համակարգի մինչև 10ՄՎտ դրվածքային հզորություն ունեցող արտադրող էլեկտրակայանները 2011 թվականի հունվարի 1-ից չեն համարվում կարգավորման պարտադիր վճար վճարողներ: Նշված օրենքի պահանջներից ելնելով՝ համապատասխան լրացում է կատարվել հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների հաշվառման կարգում, ինչպես նաև ճշգրտվել և հաստատվել են հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2011 և 2012

թվականների անվանական կազմը և հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը:

2011 թվականի փետրվարին սակագների ճշգրտման առաջարկով հանձնաժողով էր դիմել «Երևան Ջուր» ՓԲԸ-ն՝ վարձակալության 6-րդ տարում մանրածախ ջրամատակարարման ծավալների, տարեկան սղաճի, ՀՀ դրամ/եվրո փոխարժեքի և ընկերությանը մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների փոփոխությունները բազիսային սակագներում հաշվի առնելու համար: Ելնելով սակագնի ճշգրտման մեթոդաբանությամբ ամրագրված բոլոր գործոնների ազդեցության հանրագումարից, ճշգրտված մանրածախ՝ ջրամատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման, գումարային սակագինը հաշվարկվել և սահմանվել է 174.065 դրամ/խմ (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը), որը 20.935 դրամ/խմ-ով ցածր է վարձակալության նախորդ տարվա համար հաշվարկված սակագնից և 6.935 դրամ/խմ-ով՝ սպառողների համար կիրառվող սակագնից՝ հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի սուբսիդավորումը: Միաժամանակ, սահմանվել են ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող այլ անձանց կամ համայնքներին խմելու ջրի մատակարարման ու ջրահեռացման մեծածախ ծառայությունների և «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ ստորգետնյա ջրերի հեռացման ծառայության մատուցման նոր սակագները:

Հաշվի առնելով «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, համաձայն որի փոստային կապի ունիվերսալ ծառայությունների սակագների վերանայման և որոշման կայացման համար նախատեսված 45-օրյա ժամկետը փոխարինվել է 90-օրյա ժամկետով, հանձնաժողովը համապատասխան փոփոխություններ է կատարել «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից մատուցվող փոստային կապի ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման ու վերանայման կարգում:

ՀՀ տարածքում գործող բջջային կապի ցանցերից դեպի ամրակցված կապի ցանցեր կատարվող զանգերի համար բջջային կապի ցանցերը շահագործող օպերատորների կողմից մինչև 2011 թվականը կիրառվում էին տարատեսակ սակագներ, ինչը խառնաշփոթ էր առաջացնում սպառողների մոտ և հանգեցնում բազմաթիվ բողոքների: Նպատակ ունենալով կանոնակարգել իրավիճակը, հիմք ընդունելով սակագների արդարացիության և ողջամտության սկզբունքը և, որպես նշված սկզբունքի հիմնավորում

ընդունելով արդեն իսկ համանման ծառայության համար սահմանված համանման սակագինը, հանձնաժողովի որոշմամբ «ԱրմենՏել», «Ղ-Տելեկոմ», «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ներին պարտավորեցվեց բջջային կապի ցանցից դեպի ամրակցված կապի ցանցեր կատարվող զանգերի համար կիրառել միևնույն սակագինը՝ ըստ յուրաքանչյուր սակագնային փաթեթի:

Ենթակառուցվածքների համատեղ օգտագործման հետ կապված խնդիրների կանոնակարգման նպատակով մշակվել և հանրային քննարկումներից հետո ընդունվել են հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների կողմից այլ օպերատորներին հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման կանոնները և այդ խողովակների ազատ թողունակության վարձակալության վճարների մեծությունը: Ընդ որում, այդ վճարները տարածաշրջանում գործող գներից մի քանի անգամ ցածր են: Սահմանված կանոնները հնարավորություն կտան անհրաժեշտության դեպքում ծառայություններ մատուցել այլ օպերատորների՝ վարձակալելով գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորի խողովակների ազատ թողունակությունը: Բացի այդ, հանձնաժողովը լրացուցիչ պահանջներ է սահմանել հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորի կողմից գծի ենթակառուցվածքների գտնվելու վայրի և առկա թողունակության մասին տեղեկությունների տրամադրման կարգում:

Հեռահաղորդակցության ոլորտի ազատականացումից հետո ցանցերի միջև մրցակցության զարգացմանը նպաստելու, ինչպես նաև տեխնոլոգիական չեզոքություն պահպանելու կարգավորման քաղաքականության արդյունքում՝

- Երևան քաղաքի ամրակցված հեռախոսացանցի թվայնացման մակարդակը 2011 թվականին հասցվել է 100 տոկոսի, իսկ ամբողջ հանրապետությանը՝ 84 տոկոսի.
- Հանրապետության ողջ տարածքում գործում են բջջային կապի փոխադարձ ներթափանցման ծածկույթ ունեցող 3G տեխնոլոգիայի վրա հիմնված երեք ցանցեր.
- Երևան քաղաքի տարածքում գործում է 4G/ LTE տեխնոլոգիայի վրա հիմնված ցանց, որը կընդլայնվի նաև մարզերում.
- Երևան քաղաքի ավելի քան 50 տոկոսում հասանելի են դարձել FTTH տեխնոլոգիայի վրա հիմնված օպտիկամանրաթելային ցանցերը: Հետագա երկու տարում

նախատեսվում է հանրապետության մասշտաբով այդ ցուցանիշը հասցնել 100 տոկոսի:

Հիմք ընդունելով օպերատորների կողմից ներկայացված 2011 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությունների տվյալները, հանձնաժողովն իրականացրել է միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայությունների շուկայի վերլուծություն և որպես գերիշխող դիրքը ունեցող ճանաչել «ԱրմենՏել» ՓԲԸ-ին, որը ծավալային առումով գրավում է շուկայի 67 տոկոսը:

2011 թվականին սահմանվել է «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից մատուցվող միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության առավելագույն սակագնի հաշվարկման բանաձևը, համաձայն որի 2011 թվականին մեկ Մբիթ/վայրկյան արագությամբ տվյալների հոսքի առավելագույն սակագինը չպետք է գերազանցի 36 000 դրամը:

2011 թվականի տարեվերջի դրությամբ միջազգային «ԱՅՓԻ» տարանցման հոսքերի թողունակությունը հանրապետությունում կազմել է 26050 Մբիթ/վ, որը 2010 թվականի համեմատությամբ կրկնակի աճել է:

Ստորև բերված է միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության հոսքերի թողունակության աճի դինամիկան 2006-2011 թվականների համար.



Հարկ է նշել, որ մրցակցության արդյունքում աճել են միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության հոսքերը, որն իր հերթին նպաստել է այդ ծառայության սակագնի նվազմանը:

Ստորև բերված է միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության սակագնի նվազման դինամիկան 2006-2011 թվականների համար.



Ակնհայտ է, որ «ԱՅՓԻ» տարանցման շուկայում գրանցվել է սակագնի կայուն նվազում, որը 2011 թվականի տարեվերջի դրությամբ կազմել է 24 000 դրամ:

Ենթակառուցվածքների և տեխնոլոգիաների զարգացումը հանգեցրել է նաև ինտերնետի մանրաձախ գների զգալի իջեցման: Մասնավորապես, 2011 թվականին մանրաձախ ինտերնետի միջին գինը 1Մբիթ/վ-ի համար կազմել է 4500 դրամ՝ 2010 թվականի 8000 դրամի փոխարեն:

Ինտերնետ ծառայությունների բաժանորդների քանակը 2011 թվականի դեկտեմբերի 31-ին կազմել է 1 835 002:

Հանրապետությունում օրեցօր մեծանում են լայնաշերտ ինտերնետ ծառայությունների մատուցման ծավալները, որի բաժանորդների քանակը 2011 թվականին կազմել է 378159:



Լայնաշերտ ինտերնետ ծառայությունների բաժանորդների քանակում ներառված չեն 3G տեխնոլոգիայով ծառայություններ ստացողները:

Էականորեն կրճատվել է ինտերնետ ծառայություններից հեռախոսացանցի միջոցով (dial-up) օգտվողների քանակը՝ 2010 թվականի վերջին գրանցված 12943-ի փոխարեն 2011 թվականի վերջին գրանցվել է 4262՝ նվազելով շուրջ 3 անգամ:

Կարգավորվող ընկերությունների ֆինանսական և տեխնիկատնտեսական հաշվետվությունների վերլուծության արդյունքները հիմք են հանդիսանում կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունման, սակագների սահմանման ու վերանայման, ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման և լիցենզիայի պայմանների վերահսկման համար, ինչպես նաև հնարավորություն են տալիս ձևավորել կարգավորվող ընկերությունների ֆինանսական և տեխնիկատնտեսական ցուցանիշների համապատասխան վիճակագրական բազա:

Այդ առումով կարևորվում է կարգավորվող ընկերություններում ազգային հաշվային պլանին համապատասխանող հաշիվների և ենթահաշիվների նոր համակարգի ներդրումը, ինչը հնարավորություն է ընձեռում հստակ տարանջատել հիմնական (կարգավորվող) և ոչ հիմնական գործունեության եկամուտներն ու ծախսերը, կատարել եկամուտների և ծախսերի մանրամասն հաշվառում և վերլուծություն: Այս համակարգն արդեն ներդրվել է էլեկտրաէներգետիկայի, գազամատակարարման բնագավառների և խմելու ջուր մատակարարող ընկերություններում, լրամշակվել են նաև ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը: Իրականացված աշխատանքների արդյունքում կրճատվել

են էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման և ջրային համակարգի ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ծավալները և ներկայացման պարբերականությունը:

2011 թվականին հանձնաժողովն էապես կրճատել է մինչև 10ՄՎտ տեղակայված հզորություն ունեցող էլեկտրական էներգիայի արտադրության և էներգետիկայի բնագավառում կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ծավալները:

Հաշվի առնելով, որ հաշվետվությունների ուսումնասիրության արդյունքում միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայությունների շուկայում գերիշխող օպերատոր է ճանաչվել միայն «ԱրմենՏել» ՓԲԸ-ն, հանձնաժողովն ուժը կորցրած է ճանաչել «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» ՍՊԸ-ի կողմից ֆինանսական հաշվետվությունների ներկայացման կարգը:

Սահմանված կարգին և ձևերին համապատասխան, տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության ծառայություններ մատուցող թվով 27 ընկերություններ հանձնաժողով են ներկայացրել եռամսյակային և տարեկան արդյունքներով ֆինանսական հաշվետվություններ, որոնց հիման վրա կատարվել է նրանց ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն:

Ջրային համակարգի, էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունները, «ԱրմենՏել», «Հայփոստ» և «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ները ևս հանձնաժողովի սահմանած ձևերին համապատասխան՝ ներկայացրել են եռամսյակային ֆինանսական հաշվետվություններ, որոնց հիման վրա կատարվել է վերջիններիս ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերլուծություն:

Էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման և ջրային համակարգերի գործունեության մասին հանրությանն իրազեկելու նպատակով հանձնաժողովն իր ինտերնետային կայքում (www.psrc.am) հրապարակել է կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները:

3. Լիցենզավորում և լիցենզավորված գործունեության մոնիթորինգ

Լիցենզավորումը կարգավորման այն հիմնական գործառույթն է, որը թույլ է տալիս մրցակցության բացակայության կամ սահմանափակ մրցակցության պայմաններում կարգավորվող բնագավառներում գործունեություն իրականացնող ընկերությունների համար գործունեության միասնական չափանիշների սահմանման միջոցով հավասարակշռել սպառողների և այդ ընկերությունների օրինական շահերը, կարգավորման դաշտում գործող տարբեր ընկերությունների համար վարել միատեսակ քաղաքականություն, ինչպես նաև լիցենզավորված գործունեության մոնիթորինգի միջոցով պատասխանատվության միջոցներ կիրառել իրենց պարտականությունները ոչ պատշաճ կարգով կատարող ընկերությունների նկատմամբ:

Հանձնաժողովը 2011 թվականի ընթացքում տրամադրել է փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման (վերականգնման)՝ 39, էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայանի կառուցման՝ 1, ջերմային էներգիայի փոխադրման ցանցի կառուցման՝ 1, ջերմային էներգիայի բաշխման ցանցի կառուցման՝ 1, «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի «Հրազդան-5» կայանում էլեկտրական էներգիայի արտադրության՝ 1, փոքր հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության՝ 16, էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայանում էլեկտրական էներգիայի արտադրության՝ 1, ջերմային էներգիայի արտադրության՝ 1, ջերմային էներգիայի բաշխման 1 լիցենզիա և ջրային համակարգի օգտագործման 1 թույլտվություն:

Այդ նույն ժամանակահատվածում տրամադրվել են հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի՝ 4, ձայնային ծառայությունների մատուցման՝ 4, տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման 7 լիցենզիա, ռադիոհաճախականությունների օգտագործման՝ 53, սիրողական ռադիոյի՝ 6 և համարների զբաղեցման 6 թույլտվություն:

Բացի վերը նշվածից, էներգետիկայի բնագավառում ստացվել և բավարարվել է լիցենզիաների գործողությունների ժամկետների երկարաձգման 29 հայտ, ինչպես նաև լիցենզիայի վերաձևակերպման, լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ գույքը վարձակալության տրամադրելու, լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ գույքը գրավ դնելուն կամ բաժնետոմսի (բաժնեմաս) վաճառելուն համաձայնություն տալու 63 դիմում: Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում ստացվել և բավարարվել են պարզ

ընթացակարգով տրամադրված լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու 38, իսկ ջրային համակարգում՝ ջրային համակարգի օգտագործման թույլտվության մեջ փոփոխություն կատարելու 2 դիմում:

Հանձնաժողովի կարգավորման ոլորտում գտնվող ընկերություններն ապահովում են ՀՀ պետական բյուջեի զգալի մուտքեր՝ լիցենզիաների (թույլտվությունների) տուրքերի, ռադիոհաճախականությունների տրամադրման և օգտագործման վճարների, կարգավորման պարտադիր վճարների, ինչպես նաև փոքր հիդրոէլեկտրակայանները լիցենզիաների գործողության ժամկետում չգործարկելու համար գանձվող ֆինանսական երաշխիքների գծով վճարումների հաշվին: 2011 թվականին նշված աղբյուրներից ՀՀ պետական բյուջե փոխանցված գումարը կազմել է շուրջ 7,7 մլրդ դրամ, որի հիմնական մասը՝ շուրջ 6,8 մլրդ դրամը, ռադիոհաճախականությունների օգտագործման գծով մուտքերն են:

Հանձնաժողովը մշտապես հետևում է կարգավորվող ընկերությունների կողմից **լիցենզիաների պայմանների պահպանման** և իրավական ակտերի պահանջների կատարման ընթացքին՝ ինչպես ընկերություններից պահանջվող հաշվետվությունների, այնպես և ընտրանքային կարգով տեղերում իրականացվող մոնթորինգի միջոցով:

2011 թվականին ուսումնասիրվել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման գործընթացը: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ ընկերությունը որոշ դեպքերում չի պահպանել նոր սպառողի սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման ժամկետները, ինչը խոչընդոտել է այդ անձանց ծրագրավորած գործարար ձեռնարկների ժամանակին մեկնարկումը կամ բնակարանների էլեկտրամատակարարումը: Նշված խախտումների համար ընկերությունը ենթարկվել է ֆինանսական պատասխանատվության (տուգանքի)՝ 30 մլն ՀՀ դրամի չափով, իսկ առկա խնդիրների կարգավորման նպատակով տրվել են համապատասխան հանձնարարականներ: Միևնույն ժամանակ նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացի մոնիթորինգի արդյունավետության բարձրացման նպատակով վերանայվել են հանձնաժողով ներկայացվող տեղեկատվությունների ձևերը:

Ուսումնասիրվել են նաև «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ների կողմից սպառողների էներգամատակարարման ընդհատումների փաստացի

ցուցանիշները: Արդյունքում պարզվել է, որ երկու ընկերություններն էլ խախտել են սպառողների էներգամատակարարման ընդհատումների համար մատակարարման և օգտագործման կանոններով սահմանված ցուցանիշները, որի համար ենթարկվել են ֆինանսական պատասխանատվության (տուգանքի)՝ 15 մլն ՀՀ դրամի չափով և զգուշացվել, որ հետագայում խախտումները կրկնվելու դեպքում կենթարկվեն ավելի խիստ պատասխանատվության:

Մրցույթին մասնակցած կազմակերպություններից մեկի դիմումի հիման վրա ուսումնասիրվել են «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2011 թվականի օգոստոսին անցկացված «Միացման և ծայրային ջերմանստեցվող մալուխային կցորդիչների մատակարարման» մրցույթի փաստաթղթերը: Արդյունքում պարզվել է, որ մրցույթն իրականացվել է հանձնաժողովի կողմից ընկերության գնումների ընթացակարգերին առաջադրված լրացուցիչ պահանջների խախտմամբ, որի համար ընկերությունը ենթարկվել է ֆինանսական պատասխանատվության (տուգանքի)՝ 5 մլն ՀՀ դրամի չափով:

Մեծածախ շուկայի առուվաճառքի կետերում էլեկտրական էներգիայի որակն ամբողջությամբ չապահովելու համար 1 մլն ՀՀ դրամի չափով ֆինանսական պատասխանատվության (տուգանքի) է ենթարկվել նաև «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ն:

Հանձնաժողովը հետևողականորեն ուսումնասիրություն է իրականացնում նաև ջրամատակարարման ոլորտում գործող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի պահանջների պահպանման ուղղությամբ: 2011 թվականին պարբերաբար ուսումնասիրվել են «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների կողմից հրապարակված գրաֆիկների ու փաստացի ջրամատակարարման տևողության ցուցանիշները և տրվել են համապատասխան հանձնարարականներ՝ առկա թերությունները վերացնելու համար:

4. Ներդրումային ծրագրեր և սպառողների սպասարկման որակի ցուցանիշներ

Կարգավորման կարևոր լծակներից է կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերի համաձայնեցումը հանձնաժողովի հետ, ինչը հնարավորություն է տալիս վերահսկել ներդրումների արդյունավետությունը՝ դրանք նպատակաուղղելով բնագավառներում նորարարական, ավելի էներգախնայող և արդյունավետ տեխնոլոգիաների կիրառմանը, սպառողներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը և մաշված սարքավորումների փոխարինմանը կամ ենթակառուցվածքների վերակառուցմանը: Հաշվի առնելով, որ կարգավորվող ընկերությունների կատարած ներդրումների վերադարձի հետ կապված ծախսերը ներառվում են սպառողներին մատուցվող ծառայությունների սակագներում և, հետևաբար, անմիջական ազդեցություն ունենում սակագների վրա, հանձնաժողովը ներդրումների առավել արդյունավետ ուղղությունների բացահայտման նպատակով իրականացնում է կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերի ուսումնասիրություն և վերլուծություն:

Սակագների վրա ներդրումների ազդեցությունը հավասարակշռելու նպատակով հանձաժողովը զգալիորեն նվազեցրել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ների 2011 թվականի համար համաձայնեցված ներդրումային ծրագրերի ծավալները: Բացի այդ, սահմանվել են ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման միջոցով սակագների վրա ներդրումների ազդեցությունը մեղմելու մեխանիզմներ:

Հանձնաժողովը ջանքեր է գործադրում սպառողների հոսանքազրկումների քանակի և տևողության, թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության ցուցանիշների հավաստիության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: Դրանց մակարդակի ճշգրտումը հնարավորություն կտա առավել հասցեական և արդյունավետ իրականացնելու ներդրումները: Ներկայումս սպասարկման որակի ցուցանիշների ծրագրային մեծությունները սահմանվում են Երևան քաղաքի և հանրապետության յուրաքանչյուր մարզի համար: Այս մոտեցումը թույլ է տալիս ներդրումներն առաջնահերթ նպատակաուղղել առավել վատթար վիճակում գտնվող բնակավայրերի սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը:

Սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը, սկսած 2005 թվականից, յուրաքանչյուր եռամսյակ ամփոփվում և հրապարակվում է հանձնաժողովի

վեբ կայքում: Այստեղ հրապարակվում են նաև ընկերության ներդրումային գործունեության արդյունքների վերաբերյալ վերլուծական տեղեկանքները:

Հանձնաժողովը, հաշվի առնելով 2011 թվականից ուժի մեջ մտած «Գնումների մասին» ՀՀ նոր օրենքի պահանջները և հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող գնումների արդյունավետության բարձրացման ու թափանցիկության ապահովման անհրաժեշտությունը, «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «ՀայՌուսգազարդ», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «ԱրմենՏել» ՓԲԸ-ների, «Տրանսգազ» ՍՊԸ-ի և «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի համար սահմանել է գնումների իրականացման լրացուցիչ պահանջներ, որոնց համաձայն՝ ընկերությունների գնումների մասին ողջ տեղեկատվությունը կհրապարակվի ինչպես գնումների էլեկտրոնային տեղեկագրում, այնպես և իրենց վեբ կայքերում:

Շարունակական բնույթ են կրում խմելու ջուր մատակարարող ընկերություններին ներկայացվող սպասարկման որակի նվազագույն ցուցանիշները բարելավելու ուղղությամբ տարվող աշխատանքները: Յուրաքանչյուր տարի «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ները հանձնաժողովի հաստատմանն են ներկայացնում սպառողների ջրամատակարարման տևողության փաստացի մեծությունները՝ տվյալ տարեսկզբի դրությամբ և դրանց ծրագրային մեծությունները՝ հաջորդ տարեսկզբի համար: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս առաջնահերթ բարելավել առավել վատթար վիճակում գտնվող սպառողների ջրամատակարարման տևողության ցուցանիշները: Հաշվի առնելով նաև, որ սպառողներին յուրաքանչյուր ամիս նախորդ ամսում սպառած ջրի դիմաց ներկայացվող վճարման փաստաթղթերում ներկայացվում են նաև հաջորդ ամսվա ջրամատակարարման գրաֆիկի նվազագույն ժամերը, սպառողներն իրենք ևս կարող են հսկողություն իրականացնել մատակարարների կողմից հայտարարված գրաֆիկների պահպանման նկատմամբ:

Փոքր հիդրոէներգետիկայի բնագավառում ներդրումների խրախուսման ուղղությամբ հանձնաժողովի կողմից տարվող հստակ քաղաքականության արդյունքում յուրաքանչյուր տարի արձանագրվում են նոր դրական ցուցանիշներ, որոնք վկայում են բնագավառի զարգացման կայուն առաջընթացի մասին: 2012 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում գործում է 116 փոքր հիդրոէլեկտրակայան, ևս 87-ը գտնվում է կառուցման փուլում: Գործող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային

հզորությունը կազմում է շուրջ 187 ՄՎտ, որոնք միջին տարեկան հաշվով ունակ են արտադրելու շուրջ 580 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 178ՄՎտ, և ակնկալվում է, որ գործարկումից հետո դրանք միջին տարեկան հաշվով կարտադրեն ավելի քան 642 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Այսպիսով, կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գործարկումից հետո Հայաստանի Հանրապետությունում կգործեն 203 փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնք կունենան գումարային 365ՄՎտ հզորություն և միջին տարեկան հաշվով կարտադրեն շուրջ 1222 մլն կՎտժ էլեկտրաէներգիա:

Այս համատեքստում հարկ է նաև նշել, որ հանձնաժողովը փոփոխություններ է կատարել ՀՀ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգում՝ հնարավորինս կրճատելով փոքր ՀԷԿ-երի կառուցման լիցենզիա ստանալու համար ներկայացվող փաստաթղթերի քանակը:

Բարենպաստ պայմաններ ստեղծելով և խթանելով փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումը, հանձնաժողովը միաժամանակ հետևում է դրանց կառուցման ընթացքին՝ համապատասխան պատժամիջոցներ կիրառելով իրենց պարտավորությունները պատշաճ կարգով չկատարող ընկերությունների նկատմամբ: 2011 թվականին լիցենզիայի պայմաններով սահմանված ժամկետներում փոքր հիդրոէլեկտրակայանները չգործարկելու կամ դրանց համապատասխան փորձաքննություններ անցած նախագծերը չներկայացնելու համար հանձնաժողովը կայացրել է 22 ընկերությունների ֆինանսական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումներ:

5. Սպառողների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների հետ տարվող աշխատանքներ

2011 թվականի ընթացքում սպառողներից ստացվել են 705 հարցադրում և բողոք, որոնցից 186-ը՝ գրավոր, 519-ը՝ հրատապ հեռախոսով և ընդունելությունների ընթացքում: Դրանցից 357-ը դրական լուծում են ստացել, 299-ի վերաբերյալ տրվել են սպառիչ պարզաբանումներ՝ գործող օրենքների, կարգերի և այլ նորմատիվ ակտերի համաձայն, 34 բողոքներում ներկայացված փաստերը չեն համապատասխանել իրականությանը, իսկ 15-ը տարեվերջի դրությամբ գտնվել են քննարկման փուլում:

Սպառողների բողոքների վերաբերյալ էլեկտրաէներգիայի, գազի, խմելու ջրի մատակարարների և հեռահաղորդակցության ոլորտում ծառայություններ մատուցող ընկերությունների ներկայացուցիչների հետ պարբերաբար կազմակերպվել են քննարկումներ, իրականացվել ստուգայցեր և ձեռնարկվել համապատասխան միջոցներ բարձրացված հարցերին պատշաճ լուծում տալու ուղղությամբ:

Հաշվետու տարվա ընթացքում շարունակվել է հանձնաժողովի արդյունավետ փոխգործակցությունը զանգվածային լրատվամիջոցների հետ:

Լրատվական գործակալությունների, հեռուստաընկերությունների, ինչպես նաև տպագիր մամուլի միջոցով հետևողաբար ծանուցումներ և հաղորդագրություններ են ներկայացվել հանձնաժողովի այն նիստերի և հասարակական լսումների մասին, որտեղ քննարկվել են սպառողների շահերին առնչվող խնդիրներ: Սպառողների իրավունքների իրազեկման մակարդակի բարձրացման նպատակով հանձնաժողովի համապատասխան մասնագետները տարբեր լրատվամիջոցներով պարբերաբար հանդես են եկել ելույթներով և պարզաբանումներով:

Որպես գերակա ուղղություն՝ հանձնաժողովի ուշադրության առանցքում է գտնվել հեռահաղորդակցության ոլորտն իր խնդիրներով և զարգացման հեռանկարներով, որոնց մասին պարբերաբար պարզաբանումներ են տվել հանձնաժողովի նախագահը, անդամները և աշխատակազմի մասնագետները:

Հանրության համար հետաքրքրություն ներկայացնող որոշումների մասին հաղորդագրությունները, հանձնաժողովի գործունեությանն առնչվող պաշտոնական տեղեկատվությունը հրապարակվել է մամուլում, հասանելի դարձել էլեկտրոնային փոստով, համացանցով: Հանձնաժողովի կայքում շարունակաբար տեղադրվել է թարմ տեղեկատվություն, որից օգտվելով՝ հանրային ծառայությունների խնդիրներով և զարգացման հեռանկարներով հետաքրքրվող լրագրողները հանրության քննարկմանն են ներկայացրել վերլուծական բնույթի հոդվածներ՝ լրացուցիչ անգամ տեսանելի դարձնելով հանձնաժողովի թափանցիկ և հրապարակային գործունեությանը:

6. Համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ

Զարգացման և առաջընթացի միջազգային փորձն ուսումնասիրելու և կիրառելու նպատակով հանձնաժողովը կշարունակի ակտիվ համագործակցությունը միջազգային

կազմակերպությունների, մասնավորապես՝ Համաշխարհային բանկի, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության, Հեռահաղորդակցության միջազգային միության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ:

Հանձնաժողովը, համագործակցելով Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների տարածաշրջանային ընկերակցության (ERRA) հետ, 2011 թվականին մասնակցել է վերջինիս կազմակերպած «Էներգետիկայի կարգավորող անձանց ներուժի ավելացում Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում» տեխնիկական փոխանակման ծրագրի, լիցենզավորման և գնագոյացման, սակագնային կոմիտեների նիստերի, «Վերականգնվող էներգետիկայի կարգավորում» թեմայով համաժողովի աշխատանքներին, ինչպես նաև ERRA-ի կողմից անցկացվող միջազգային ամառային դասընթացներին:

INOGATE ծրագրի շրջանակնում 2011 թվականին հանձնաժողովը մասնակցել է «Էներգաարդյունավետության քաղաքականության ազդեցությունը կարգավորման դաշտում» թեմայով սեմինարին, SEMISE նախագծի շրջանակում էլեկտրաէներգետիկայի և գազի շուկաների կառուցվածքի փոփոխությանը և ազատականացմանը նվիրված ուսումնական ծրագրին, ինչպես նաև «Աջակցություն ԱՊՀ երկրներում էներգետիկ շուկաների ինտեգրմանը և կայուն էներգետիկային» ուսումնական դասընթացին և INOGATE կազմակերպության համակարգող երկրների համաժողովին:

2011 թվականին ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության հրավերով՝ համագործակցության շրջանակում, հանձնաժողովի մասնագետներն այցելել են ԱՄՆ-ի Այովա նահանգ:

Հանձնաժողովը մասնակցություն է ունեցել ՎԶԵԲ-ի կողմից իրականացված էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի համեմատական գնահատման տարածաշրջանային ծրագրի աշխատանքներին:

2011 թվականին զգալի աշխատանք է տարվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հեռահաղորդակցության բնագավառի զարգացման ուղղությամբ: Համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի միջև կնքված հուշագրի, համատեղ աշխատանքներ են կատարվել՝ ուղղված ԼՂՀ տարածքում հեռահաղորդակցության ծառայությունների, այդ թվում՝ շարժական և ամրակցված հեռախոսակապի, «ԱՅՓԻ» տարանցման և ինտերնետ

հասանելիության ծառայությունների առավել ընդլայնմանն ու սակագների մատչելիության ապահովմանը:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի գործունեության ֆինանսավորման հաստատված բյուջեի, տարեկան ճշտված բյուջեի, ֆինանսավորման, դրամարկղային և փաստացի ծախսերի մասին

/հազ. դրամ/

Հոդ/ համ	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ	Հաստատված բյուջե	Ճշտված բյուջե	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
	Ընդամենը	**417970,9**	**417970,9**	**416499,22**	**416457,69**	**415045,91**
411100	Աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարումներ	321516,0	328516,0	328516,00	328516,00	328516,00
413100	Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	33000,0	33000,0	33000,00	33000,00	31290,50
421200	Էներգետիկ ծառայություն /գազ, էլ. էներգիա/	6460,0	6460,0	6460,00	6460,00	6646,56
421300	Կոմունալ ծառայություն /ջուր, աղբահանություն/	380,0	180,0	180,00	180,00	174,03
421400	Կապի ծառայություն /հեռ., կապ, իրտեկ, ռադիո, փոստ/	7400,0	7400,0	6748,61	6748,61	6865,74
421500	Ապահովագրական ծախսեր	440,0	440,0	433,41	433,41	433,41
	Գործուղումներ և շրջագայության ծախսեր	14177,3	6317,3	5967,99	5926,47	5926,47
422100	-հանրապետության ներսում	980,0	980,0	635,15	635,15	635,15
422200	-արտասահմանյան	13197,3	5337,3	5332,84	5291,32	5291,32
423200	Համակարգչային ծառայություններ		860,0	830,00	830,00	830,00
423400	Տեղեկատվական ծառայություն /թերթեր, ամսագիր, հայտարարությունների տպագրություն	1050,0	850,0	751,80	751,80	751,80
423700	Ներկայացուցչական ծախսեր	700,0	380,0	368,74	368,72	368,72
423900	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	731,4	731,4	722,40	722,40	722,40
425200	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ վերանորոգում /ավտոմեքենաների, հովացման և ջեռուցման համակարգի, համակարգչային տեխնիկայի/	4352,3	4112,3	3835,37	3835,37	3835,37
426100	Գրասենյակային նյութեր	6700,0	6700,0	6700,00	6700,00	6700,00
426400	Տրանսպորտային նյութեր /բենզին, անվադողեր/	7775,7	7775,7	7775,50	7775,50	7775,50
426700	Կենցաղային և հանրային սնունդ	780,0	780,0	774,64	774,64	774,64
462100	Դրամաշնորհներ	1750,0	1750,0	1749,97	1749,97	1749,97
482200	Այլ հարկեր	50,0	50,0	22,50	22,50	22,50
512100	Տրանսպորտային սարքավորումներ	9000,0	9000,0	9000,00	9000,00	9000,00
5122	Վարչական սարքավորումներ	1708,2	2668,2	2662,30	2662,30	2662,30